Մեդիագրագիտության կիրառումը տնային աշխատանքի հանձնարարման և կատարման ընթացքում: Հայոց լեզու և գրականություն, Հասարակագիտություն

Դասընթացավարներ՝

Ռուզաննա Սարոյան՝ Եղեգնաձորի ավագ դպրոցի ուսուցչուհի

Նարինե Գրիգորյան՝ Եղեգնաձորի թիվ 1 հիմն դպրոցի ուսուցչուհի

Դասի թեման՝ **Արդյունավետ հաղորդակցում**

(նախատեսված 2 դասաժամի համար)

Դասարանը՝ 7-րդ

Դասի նպատակները՝

1. Ձևավորել արդյունավետ հաղորդակցման հմտություններ:

2. Նպաստել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

3. Նպաստել մեդիագրագիտության ձևավորմանը // զարգացմանը:

Դասի վերջնարդյունքները՝

1. Նկարագրի արդյունավետ հաղորդակցման էությունը:
2. Արժևորի արդյունավետ հաղորդակցման հմտությունները:
3. Տարբերակի տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու միջոցներն ու մեթոդները:
4. Դրսևորի քննադատական ու ստեղծագործական մտածողություն:

Դասի ընթացքը՝

Խթանում

1. Դիտել մուլտֆիլմը : **Урок правильных коммуникаций**

https://www.youtube.com/watch?v=NfpXJkG14Bo

Քննարկում

Աշակերտներին հանձնարարվում է քննարկել և ներկայացնել մտքերն ու դիտարկումները հետևյալ հարցերի շուրջ: Օգտագործվում է հարցերի արկղիկը:

ա/Ի՞նչ կատարվեց:

բ/ Ինչու՞ այդպես ստացվեց:

գ/ Ո՞ր պահից սկսած կարող էր պատմությունն այլ ընթացք ունենալ: Ինչի՞ շնորհիվ:

դ/ Որո՞նք էին էական սխալները:

ե/ Խորհուրդ տվեք հերոսներին:

զ/ Ինչպե՞ս է ձևավորվում հաղորդակցումը: Ի՞նչ է արդյունավետ հաղորդակցումը:

է/ Արդյունավետ հաղորդակցման համար կարևո՞ր է արդյոք ճիշտ վարքագիծը:

ը/Իսկ ո՞րը կարող ենք համարել ճիշտ վարքագիծ: Բերեք օրինակներ:

Բացատրում

Ուսուցիչը նյութը ներկայացվում է սահիկաշարով

Գործնական աշխատանք

Աշակերտներին հանձնարարվում է ընթերցել դասագրքի նյութը՝ գրառելով այն տեղեկությունները, որոնք ներառված չէին սահիկաշարում:

Իմաստի ընկալում

Աշակերտները ծավալում են քննարկում հետևյալ հարցադրումների շուրջ.

ա/ Ի՞նչ նոր բան իմացանք դասագրքից: Արդյո՞ք հաղորդակցման ձևերը ժամանակի ընթացքում կրել են փոփոխություն:

բ/ «Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, կիսվի՛ր» հնարն օգտագործելով՝ աշակերտները լրացնում են «Ժամանակի անիվը», որի վերնագիրն է «Հաղորդակցման ձևերը նախնադարից մինչ մեր օրեր»

Սկզբում աշխատում են ինքնուրույն, հետո՝ զույգով, խմբում ի մի են բերում գաղափարները և գրանցում ընդհանուր պաստառի վրա՝ կրկնելով նախորդ խմբին:

գ/ Հաղորդակցման ի՞նչ ձևեր ու միջոցներ կան մեր օրերում: Դրանցից որո՞նք եք դուք հաճախ օգտագործում: Մեկնաբանեք ձեր ընտրությունը:

Անդրադարձ

Ուսուցիչը, ամփոփելով աշակերտների պատասխանները, տալիս է հետևյալ հարցերը՝ Ի՞նչ հնարավորություններ ունի համացանցը: Որո՞նք են համացանցից օգտվելու առավելություններն ու թերությունները: Գրանցում է պատասխանները, որոնց անդրադառնալու են սահիկաշարը ներկայացնելուց հետո:

Ուսուցչի կողմից ներկայացվում են մեդիագրագիտության էությունն ու դրան ներկայացվող պահանջները:

Գործնական աշխատանք

Աշակերտներին հանձնարարվում է, օգտագործելով ստացած գիտելիքները, համացանցի օգնությամբ գտնել այնպիսի նշաններ, գաղափարագրեր, խորհրդանիշներ, որոնք որևէ մասնագիտական, մշակութային խմբի կամ ազգի կողմից ընկալվում են որպես հաղորդակցման նշաններ: Խմբերը ներկայացնում են իրենց „գյուտը„ մնջախաղով: Մյուսները գուշակում են:

Կատարված աշխատանքի ներկայացում

Անդրադարձ

Պատկերացրեք, որ գյուտարար եք: Մտածեք և գտեք 1 միջոց, որ մարդիկ կարողանան օգտագործել՝ իբրև հաղորդակցման միջոց, 50 տարի հետո: Ներկայացրեք այն

Տնային առաջադրանք

Տնային առաջադրանքը տրվում է ըստ խմբերի:

- **1-ին՝ Կարմիր խումբ՝**

Պատրաստել ելույթ կամ սեմինար՝ ներկայացնելու համար արդյունավետ հաղորդակցման
կարևորությունն ու դրա համար անհրաժեշտ հմտությունները:

- **2-րդ՝ Կապույտ խումբ՝**

Պատրաստել հարցազրույց կամ ձայնվածք՝ «Մարդու խառնվածքն ու արդյունավետ Հաղորդակցումը» թեմայով:

- **3-րդ՝ Կանաչ խումբ՝**

Պատրաստել սահիկաշար արդյունավետ հաղորդակցման խոչընդոտների, սխալների ու սահմանափակումների մասին:

- **4-րդ՝ Դեղին խումբ՝**

Կատարել հետազոտություն. գտնել 5 գիրք և 5 ֆիլմ, որոնք պատմում են արդյունավետ հաղորդակցման մասին, դրանց համար պատրաստել ռևյու կամ շնորհանդես:

Աշակերտներին հրահանգվում է տնային առաջադրանքը կատարելիս օգտվել թվային աղբյուրներից և այն ներկայացնելիս նշել օգտագործած աղբյուրները՝ հիմնավորելով, թե ինչու են դրանք համարում վստահելի և հուսալի:

Խմբով աշխատելու համար խորհուրդ է տրվում կիրառել համացանցի ընձեռած հնարավորությունները /առցանց հանդիպման միջոցներ/:

Օգտագործված գրականություն՝

1. ՀՊՉ
2. Հասարակագիտության առարկայական չափորոշիչ
3. Դասագիրք. Հասարակագիտություն-7
4. Վերապատրաստման նյութեր

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: